




ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՂԲԱՏԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ*

Հաղբատը թագավորական և իշխանական տոհմական գերեզմանատուն էր, հետևաբար, թագավորների և իշխանների հոգածության առարկան: Նրանց «հովանավորությանը», բնականաբար, Հաղբատը պետք է հետզհետե բարձր դիրք ձեռք բերեր մեր եկեղեցական նվիրապետության հոգևոր կյանքի մեջ»,—գրում է հայ մշակույթի պատմության անխնայ հետազոտող Գաբրիել արք. Հովսեփյանը, Հաղբատի մանրանկարչական մի գլուխ-գործոցի նվիրված ուսումնասիրության մեջ¹, և Հաղբատի մատենագրության և ձեռագրական արվեստի զարգացումը այդ դերի ու դիրքի հետևանք համարում: Արևելյան Հայաստանի ԺԲ դարի և ԺԳ-ի առաջին կեսի նշանավոր հեղինակների մեծագույն մասը Հաղբատից են կամ Հաղբատի հետ կապված: «Հաղբատի անունը մեծ էր նաև իբրև գրչության դպրոց,—շարունակում է նա,—և դա հասկանալի է, մի տեղ որ այնքան ստեղծագործական կյանք կար, վարդապետների և աշա-

կերտների բազմություն, պետք է ծաղկեր և գրչության արվեստը»²: Իսկ այդ արվեստը Հաղբատի վանքում սկսվում է նրա կառուցման հետ, և կապվում վանքի հիմնադիր և առաջին վանահայր, նշանավոր գրիչ Սիմեփոն վարդապետի անվան հետ:

Սիմեոնին առաջին անգամ հանդիպում ենք Սանահնում 972 թ., որպես գրչի: Նրա հետ երկրորդ հանդիպումը դարավերջին էր, սակայն մինչ այդ նա, անշուշտ, ոչ միայն գրել, այլև գրել է տվել բազմաթիվ ձեռագրեր, հիմնադրել գրչության կենտրոն՝ գրիչներով, թուղթ կոկողով ու կազմատնով: Ինքը, չնայած առաջացած տարիքին, անցնելով Հայաստանի տարբեր գավառներ և եպիսկոպոսարաններ, ուր գրչության նշանավոր կենտրոններ կային և մատենադարաններ, ընդօրինակում և Հաղբատ էր բերում անհրաժեշտ նյութեր՝ ուսուցման և ընդօրինակման համար: 999 թ. Աղբակում և Կոզոփիտում Պողոս առաքյալի թղթերի, Եփրեմ և Ոսկեբերան Հայրապետների մեկնությունների³ ընդօրինակությունները դրա ապացույցն են: Այս ձեռագրի հիշատակարանը, որ գրված է Հաղբատում, և այդտեղից մեզ հասած ձեռագրական առաջին նմուշն է,

* Շարունակություն «Սանահնի և Հաղբատի գրչության կենտրոնները» հոդվածի: Տե՛ս «Էջմիածին», 1968, 2, էջ 31—41:

¹ Գաբրիել արք. Հովսեփյան, Հաղբատի դպրոցի մի գլուխ-գործոց, «Նիսիս» և ուսումնասիրություններ հայ արուեստի և մշակույթի պատմության», պրակ Ա, Նորուստի, 1936, էջ 65:

² Անդ, էջ 70:

³ Գաբրիել Կաթողիկոս Հովսեփյան, Ցիշատակարանը, Ա, էջ 163—168:

ցույց է տալիս, որ «Միմնովն նուաստ եւ անպիտան կրանատոր»-ը ոչ միայն ընթերցասէր և ցանկացող է» այս կարգի գրքերի, այլև այդ գրքերը գնահատող, որոնք գրված են սերունդների համար, «որք զկնի իմ վալելեն գաւ և լուսատրին: Բայց աւաղ թէ եւ լանգիտաց անկեալ ի ձեռս անարգաբար և ընդ վայր հարկանի, զի հրաժարեցուցանէ եւ անտարանն՝ արկանել խոզից մարգարիտ և տալ արքային» շանց, և որ այլ ևս: Այլ դու, ով այր դու Աստուծոյ, գիտեալ զինչ է սա, և ուսիր և ծանիր զաշխատութիւնս իմ և մի ապախտ առնէր զվաստակդ իմ»⁴: Բարեբախտաբար, ոչ անգետ, այլ գիտուն Հովհաննէս Բագրատունի թագաւորի ձեռքն է ընկնում այս գիրքը, գրում է Ղ. Ալիշանը, ապա Անիի արքունական գրատուն, այնտեղից՝ Սարգիս վարդապետին: Զեռագրի հետագա տերերից են նշանակւոր վարդապետներ Գրիգոր Տուրքոթրին (1154 թ.) և Հովհաննէս Որոտնեցին (ԺԴ դար): Այժմ վեներտիկի Միսթարյանների սեփականությունն է այն, և հանգչում է սուրբ Ղազարի Մատենադարանում, որպէս շրագրի հնագույն օրինակ և մեզ հասած հայերեն թղթյա հնությանք երկրորդ ձեռագիր⁵:

Այս ձեռագիրը կազմվում է Հաղբատուն Միմնովն վարդապետի գործակից Տիրանունի ձեռքով: Միմնովն կազմվելուց հետո խնդրում է Տիրանուն կազմիչին «անմոռաց ունել»: Այս անունները միասին դրոշմված են Հաղբատի սուրբ Նշանի որմին. «Ի ՆԽ (991) թուակ[անութեանս] Միմնուն հայր եւ Տիրանուն շինեցաք զեկեղեցիս»⁶:

Կազմիչի մասին սույն վկայությունը թավակիր ձեռագրերում հնագույնն է, և Հաղբատի գրչության ու կազմարարության զարգացման ապացույց: Միմնուն վարդապետի անվանը հանդիպում ենք մինչև 1005 թ. Հաղբատի արձանագրություններում⁷: Իսկ նրա հիմնադրած վանքը, գրչության կենտո-

րոնն ու մատենադարանը շարունակում են իրենց գոյությունը հետագա դարերում, երբեմն ծաղկելով, երբեմն խամրելով:

Միմնունից հետո հաջորդ գրիչը Հովհաննէսն է, որը «ի մագաղաթի ի վանս Հաղբատայ ի հայրապետութեան Պետրոսի Ա Գետադարձի կաթողիկոսի... ի թուին ՆԿԸ (1019)»⁸: Գրում է մի Ծարակնոց: Զեռագիրն այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, 1577 թ. համարի տակ, սակայն գլխավոր հիշատակարանը ընկել է և թյուրիմացությունների տեղիք տվել⁹: Հաղբատի գրչագրերի մասին այնուհետև շուրջ հարյուր հիսուն տարի տեղեկություններ չեն հասել մեզ:

Բայց տեղեկություններ կան Հաղբատի դպրոցի վերաբերյալ: ԺԱ դարավերջում Հաղբատի դպրոցի համբավը տարածվում էր Հայաստանում: Այնտեղի դաստիարակներից մեկը քեռին էր հետագայում հռչակված Հովհաննէս Սարկավագի, որի մոտ վերջինս «սնեալ և դաստիարակեալ»¹⁰, դառնում է «մեծիմաստն գիտութեամբ, քան զյուրիս և հանճարեղն յամենայնի, մտահաւորսուն Յովհաննէս Սարկավագն կոչեցեալ ի Հաղբատ»¹¹, իր հետ բարձրացնելով Հաղբատի դպրոցի մակարդակն ու հռչակը: Սարկավագի աշակերտներից հայտնի են Երեմիա Անձրեկը, Սամվել Անեցին, Սարգիսը, Խաչատուրը, Գրիգոր և Հովհաննէս Անեցիները, իսկ ընկերներից էին Գրիգոր Թոկակերի որդին և Դավիթ Ալավկա որդին «սոքա երեքեանս էին յաշխարհէն Գանձակայ»¹²: Հովհաննէս Սարկավագ մեծ վարդապետի և հոգևորի ջանքերով Հաղբատում ծաղկում է գրչությունը. «Ծուրջ բակ բոլորեալ զմանկունս գիրեալ խոնարհաբար եւ ախորժելի սիրով ուսուցանէր զկրթին և զխորին իրս... եւ ամենայն նսեմացեալ եւ խաւրացեալ գիտութիւնք, որ ի տգիտութենէ եւ ի ծուլացելոց եւ խաւարելոց մտաք ծածկեալ աղաւաղեցան՝ որ ի նախնեացն, նորին աշխատաջան երկովք եւ արագութեամբ մտաց

⁴ Անդ, էջ 167:

⁵ Ղ. Ալիշան, Հայագրատուն, էջ 312, 319: Այրաբատ, էջ 167, 497, Ծիրակ, էջ 49—50:

⁶ Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 2968, էջ 141:

⁷ Նույն տեղում, էջ 249: Սա չէ արդյոք այն «Հայր Միմնունը», որ «արար զԱղաճգիրքս, հարիր յիսուն և մի ճառ, ի խնդրոյ Անեքարիմայ թագաւորին վասպուրականի» (Յիշատակարանք, Ա, էջ 197): Միմնունը թագավորից կարող էր 999 թ. (այնտեղ եղած ժամանակ) պատվիր ստանալ, և օգտվելով Սանահրնի և Հաղբատի մատենադարանների նյութերից 1001 թ. տվարտել այն: Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, Երևան, 1948, էջ 496—497:

⁸ Գարեգին արք. Հովսեփյան, «Նիսիւր...» պր. Ա, էջ 70: Հեղինակն հաղորդում է, որ Ներսէս Միքայելյանը ծխտում է այդպիսի Ծարակնոցի գոյությունը էջմիածնում:

⁹ Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Յիշատակարանք, Ա, էջ 335:

¹⁰ Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Յիշատակարանք, Ա, էջ 335:

¹¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 113:

¹² Անդ, էջ 116:

զարդարեցան, ցնծացան անձինք տեսաւոր և լսատի արանց»¹³:

Հովհաննէս Սարկավազը անձամբ հոգ էր տանում հին, թարգմանչագիր և այլ արժեքավոր ձեռագրերը հայտնաբերելուն, սըրբագրելուն, լրացնելուն և հանձնում ընդօրինակության: Հայ հոեւտոր վարդապետների սրբազան գործն էր այս: Նրանց անխնայ ջանքերի արդյունքն են մեզ հասած ձեռագրերի համեմատաբար անսխալ և ճշգրիտ վիճակը:

Ուսուցանող ու ստեղծագործող էր խոշոր գիտնական ու մատենագիր Հովհաննէս Սարկավազը, սրբագրող ու վերականգնող, ձեռագրերի ստույգ օրինակներ ստեղծող: Այդ պատճառով Կիրակոս Գանձակեցին՝ գնահատելով նրան որպէս մեծ գիտնականի, չի մոռանում նաև նրա գրչագրական ծառայությունները, շեշտելով, որ «գրեաց և օրինկս ստույգ գրոց»¹⁴: Սարկավազի սրբագրությամբ հայտնի են Սաղմոսարանի և Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» գործի ստույգ օրինակները. «Այս Սարկաւազըս, այր սուրբ և տեսանալ գուարթատէս և լի հոգով... վշտացեալ էր ի բազում ծամանակս վասն այլալման Սաղմոսիս, և ոչ գիտէր զեյս իրացն, թէ ուստեք ճշգրտեսցէ: Եւ ապա մտեալ ի յարկեղս գրեանցն, որ ի Հաղբատ, զամենայն ուրոնեաց, և ապա հուսկ քան զամենայն գրեանսն ի ներքոյ ձեփո թարգմանչագիր Սաղմոսարան ջինջ և նուաղ գրով, եւ առեալ զայն խնդութեամբ համբոյրեաց և եղ ի վերայ աչաց իւրոց, և ապա արկեալ ձեռն ի գործ, բացայայտեաց անտի զծածկեալ զանձն և զխցեալ աղբիւրն»¹⁵: Վարդան Արեւելցի և Հովհաննէս Գառնեցի վարդապետները ԺԳ դարում, դարձյալ Հաղբատում հանդիպում են «նորին սուրբ վարդապետին սուրբ ձեռամբն գրեալ Սաղմոսարանին»¹⁶ և հարազատությամբ ընդօրինակում և տարածում: Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» աշխատությունը, որ հայերեն է թարգմանված իննեւորորդ դարում, «սխալեալ թիրեցին անհանձարութեամբ գրիչք, որ միայն ողորկութեան գրի ուշ եղեալ և ոչ ստուգութեան մտաց և բանից... Սարկաւազ քահանայ, սպասաւոր սուրբ Կաթողիկէի մեծի, որ յԱնի, ի բազմաց օրինակաց ի ձեռն և այլոց գիտնակաւաց զօգտակարսն առեալ հաւաքեաց ի մի

դիր, և շարադրեաց իւրով ձեռամբ, ի դիւրաւոր մտաց և գիտութեան»¹⁷: Հայտնի են Աստվածաշնչի և Դիոնիսիոս Արիպագացու Հաղբատի հոշակված ստույգ և ընտիր օրինակներ. արդյոք դրանք Սարկավազի ձեռքով չե՞ն անցել: Համենայն դեպս Աստվածաշունչ էր ընդօրինակվում «ի ստույգ և ընտիր արիմակէ, որ կոչի Բագնայեցի, զոր սուրբ վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչացն գրած ի մայրաքաղաքն Հաղբատ»¹⁸: Հաղբատում հիշվում է թարգմանչագիր Աստվածաշնչից 951 թ. ընդօրինակված մի ձեռագիր¹⁹: Եւայի Նչեցու «հրամանաւ և արդեամբ» 1338 թ. ընդօրինակվում է «Գրութիւնք Դիոնիսեայ Արիպագացոյ... ի ստույգ և ընտիր արիմակէ, ի հոշակաւոր ուխտէն Հաղբատայ»²⁰:

Հաղբատի գրչության կենտրոնում հետագայում աշխատել են պահպանել և շարունակել սկսված ավանդույնները: Ս. Սարգսի վկայաբանության Միխայելի թարգմանությունը, Հաղբատի առաջնորդ Գեորգ եպիսկոպոսը 1158 թ. ուղարկում է Ներսէս Շնորհալուն ճշգրտելու և հարմարեցնելու «ըստ կարի մերումս շարադրութեան»²¹: Հաղբատի նշանավոր վարդապետներից Վարդան Հաղբատեցին «ի ծերութեան իւրում աղաչեաց» Ներսէս Շնորհալուն, որ մեկնի Դավիթ Անհաղթի «զԾառն բարձրացուցէք» և կատարեաց զխնդիրն նորա... զոր ընթերցեալ Վարդանայ ուրախ լինէր յովք»²²:

Վարդան Հաղբատեցու ծամանակ և նրանից հետո նշանավոր էին ուխտի առաջնորդ Բարսեղը և Դավիթ Քոքայրեցի վարդապետը: Բարսեղի խնդրանքով, Սարգիսը 1172 թ. ընդօրինակում է Բարսեղ Կեսարացու ճառերը: Գրիչը առաջնորդի մասին գրում է. «Սա ելից ընդ այլ թերութեանցն բազմաց և զայսմ գրոց պակասութիւն և հաստատեաց ի սուրբ տեղուքս, զոր մի որ իշխեսցէ հեռացուցանել ի սուրբ ուխտէս»:

Հավանաբար նա է այն Բարսեղ առաջնորդը, որի օրոք Գրիգոր գրիչը «ի մայրաքաղաքիս Հաղբատայ» Արարածոց մեկնությունն է ընդօրինակում²³:

¹⁷ Մատենադարան, ձեռ. № 5609, էջ 85բ:

¹⁸ Գարեգին արք. Հովսէփյան, «Նիսիւր...» պրակ Ա, էջ 71:

¹⁹ Մատենադարան, ձեռ. № 167, էջ 337բ:

²⁰ Գարեգին Կաթողիկոս Հովսէփյան, Յիշատակարանք, Ա, էջ 371—372:

²¹ Կարճ ծամանակ անց, 1171 թ. վախճանվում է Վարդան վարդապետը, և թաղվում Հաղբատում: (Հ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, էջ 279):

²² «Բագմատէպ», 1954, էջ 306, 286:

²³ Մատենադարան, ձեռ. № 5602:

¹³ Ա. Աբրահամյան, Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 25—27:

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1962, էջ 113:

¹⁵ «Սիոն», Երուսաղեմ, 1868, թիւ 8, էջ 19:

¹⁶ Անդ:

Դավիթ Քոբայրեցուց Մաշտոցի անվան Մատենադարանում երկու ընդօրինակություն է պահպանվել, № 5602 ձեռագիրը, գրված 1178 թվականին, և Մխիթար Գոշի «Մեկնություն երեսնայի» գործը գրված 1198 թ.²¹։ Այս ձեռագրի մի մասն է ինքը գրել. «...զի անպարսպեալ իմոյս անձին ի ժամանել և դրոշմել զսա, այլ և այլում տխմարաց ետու գծել և ապաշառ ունիմ, թեպէտ և ուղիւցի յետոյ»²²։ Գ. Հովսեփյանը կարծում է, որ տեղը պետք է լինի Հաղթատը, համեմայն դեպս Լոռին²³։

Նրա ընդօրինակությունները սրբագրված և խմբագրված ընտիր օրինակներ են։ Դավիթ Քոբայրեցին շարունակում էր ձեռագրերը կարգավորելու, ճշգրտելու Հաղթատի գրչության կենտրոնի ավանդույթը։ Բարսեղ գրիչը հետաքրքիր տեղեկություններ է բերում Դավիթ Քոբայրեցու և նրա աշակերտ Մխիթարի վերաբերյալ։

«Բայց գրեցաւ սա ի յարիմակէ մեծիմաստ և կորովաբան վարդապետին Դաւթա... մականուն Բովերեցի կոչեն, վասն ծնողացն անտի լինելոյ և նոյն ինքն անտի ծննդեամբ։ Եւ զի ժողովեալ է տրա գրանս երիցս մեկնչացն սրբոց, որպէս ցուցանէ իւրն յիշատակարան, և անանէ զինքն քահանա միայն՝ զարծրագոյն պատիւն ծածկելով՝ զվարդապետական անուն. բայց զի երկուցն սրբոց բանքն Կիրոյի և Յոհաննու ոչ գա ի յաւարտ գրոցս, որպէս ցուցանէ իւրաքանչիւրսն զկայն առեալ, զոր մէք նշանագրեցաք զտեղիսն՝ անգիտանամք զպատճառն և զայս, զի յիշեցաք՝ այսու պատճառաւ, զի մի կարծիք լիցի, թէ այլ ոք գծելով զսա ոչ է գրել զերկուցն բանսն։ Զինչ և իցէ պատճառ, զի այս գիրք այլ ոչ է արիմակել անդից և այսր, որ մէք գծեցաք, բաց ի նորին աշակերտէ և արեան հարսաւտէ Մխիթար վարդապետէ, որ նորին հրամանաւ սրբագրել է զնորին երկն աշխատութեամբ։ Բայց ոմանք ասեն՝ ի նոյն սուրբ ուխտն և այն, թերևս կարծեալք, թէ ի Դաւթա սկզբնաւորել և ոչ ժամանել ի յաւարտն, փոխի մահումսն ի սրբոցն կալանս և առանդէ զթերին ի յոյսեմէ վերագրել աշակերտին իւրոյ՝ լանձն արարել, զի ի յաւարտ հասուցէ, և նորայ միայն զԵփրեմին սրբոյ քառական համարել գրէ և զայլն ոչ ևս։ Բայց ոչ տա իրաւունս այսմ այսպէս լինել յիշատակարանդ նորուն Դաւթա, որ ի կատարած գրոցդ եղեալ է, ապա թէ ոչ՝ յի-

շատակարանդ ոչ է գրած նորուն Դաւթա, այլ Մխիթարա, և վասն երկիւղածութեանս իւրոյ անձինն՝ վարդապետին տա զիւրն աշխատութիւն ի նորայն խառնելով ի նորայ անուն և զյիշատակարանն գրէ։ Արդ եթէ այդպէս է և թէ այսպէս՝ անգիտելի է»²⁷։

Այս հիշատակարանը կարևոր է նաև այն տեսակետից, որ հմտավարժ գրիչները ոչ միայն ընդօրինակում, այլ երբեմն բանասիրական-քննական աշխատանք էին կատարում։ Այս կարգի հիշատակարանները պատմականին զուգընթաց, ունեն նաև մատենագիտական-մատենագրական նշանակություն։

Դավիթ Քոբայրեցու աշակերտ Խաչատուր արեղան 1195 թ. «ի գաւառիս Զորոյ գետ, ի վանքս Հաղթատ... ի վարդապետութեանն Դաւթի (մեծարգի և իմաստուն վարդապետին իմոյ)», ուսուցչի օրինակից արտագրում է Ծառք անտարանականք խորհրդաւորք Աքբա Եփրեմի²⁸։ Այս Խաչատուր արեղան Սանահին Խաչատուր վարդապետը չէ՝ արդյոք, որին հանդիպեցինք 1207—1233 թթ.։

Մատենադարանի № 2840 ձեռագիրը Սատվածաշնչի մաս է, գրված ԺԲ դարում Խաչատուրի կողմից։ Բոլորգիրը և թուղթը նման է Սանահնում-Հաղթատում կատարված ընդօրինակություններին։ Սրբագրել է գրիչը ինքը։ Ձեռագիրը պատկանել է Սանահնի վանքին և պահվել նրա գրադարանում։ Թվում է, այս Խաչատուրը՝ նույնն է հիշյալի հետ։ Գ. Հովսեփյանի կարծիքով Մատենադարանի № 6263 ձեռագիրը Հաղթատում պետք է գրված լինի 1187—1212 թթ. միջև ընկած ժամանակում, որ հիշվում են Ամիր Սարգիս և Զաքարիան։ Գրիչը Գրիգորն է, Մխիթարը՝ ստացողը²⁹։ Ի տարբերություն Հաղթատից մինչ այդ մեզ հասած ձեռագրերի, այս մեծադիր Գործք ստաբելոցը գրված է մագաղաթի վրա, երկաթագրով։ «Ձեռագիրը նշանավոր է նաև յուր կազմի ներսի լաթով, որ Սասանյան կտոր է»³⁰, ինչպես նաև քիչ, բայց արժեքավոր զարդերով։

«Ի թուխ Հայոց ՈՄԶ (1207)... գրեցաւ խոշոր գրով գիրքս այս ձեռամբ նուաստ և ամենամեղ քահանայի Ստաբելոյ, ի սուրբ և հոշակաւոր ուխտս [Հաղթատ] ընդ հովանեաւ Սրբոյ Նշանիս և մարս լուսոյ Կաթողիկէի»³¹։ Ձեռագիրը Աստվածաշնչի մասն

²⁷ Յիշատակարան, Ա, էջ 588—592։

²⁸ «Հանդէս ամսօրեա», 1935, էջ 5—7, Յիշատակարանք, Ա, էջ 698։

²⁹ Գարեգին արք. Հովսեփյան, Սասանյան կերպասի կտոր... «Հանդէս ամսօրեա», 1935, էջ 5։

³⁰ Մատենադարան, ձեռ. № 194, էջ 153ր։

³¹ Յիշատակարանք, Ա, էջ 733—736։

²¹ Մատենադարան, ձեռ. № 2606, էջ 234։

²² Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Յիշատակարանք, Ա, էջ 269։

²³ Երուսաղէմ, ձեռ. № 1758, էջ 492։

Է. տեղը՝ ջնջված³²։ Այս ձեռագիրը «ի ստույգ գիտողաց և յուրիւ յարինակել գրեցաւ,— գրում է գրիչը,— թեպէտ և ես ականար էի, զի ոչ մտահանութեամբ է ընտրեալ, այլ ի բազում արինակաց ընտրեալ և վկայել ի գիտնականաց եկեղեցոյ»³³։

Նախորդ ձեռագրից բացի, Հաղբատից և Սանահինից մեզ հասած ձեռագրերը (ԺԲ դարը ներառյալ) բոլորգորով են գրված, որը Սիմեոնի մոտ կոչվում էր «անհեթեթ գիր», իսկ այստեղ «խոշոր», անկանոն գիր։ Հիշյալ գրչության կենտրոններում, ուր համարյա գերազանցապէս ընդօրինակությունները կատարվում էին ուսուցման նպատակով՝ և մեծ մասամբ մեկնողական գրականություն էր, բոլորգիրը ձեռնառու էր արագագործության և քիչ տեղ գրավելու համար։

1211 թվականին Հաղբատի սան Սահակ Անեցին, Արշուտիհում իրենց կառուցած եկեղեցու համար, Հաղբատում պատվիրում է մի ավետարան։ Գրում է Հակոբ գրիչը և նկարազարդում Մարգարա ծաղկողը³⁴։ «Այս ձեռագիրը ունի մանրանկարչական բարձր արվեստ և մեծարժեք է Հաղբատի դպրոցի գրչության ուսումնասիրության համար,— գրում է Գ. Հովսեփյանը, որը ձեռագրի մանրամասն ուսումնասիրությանն է նվիրել ընդարձակ մի հոդված՝ «Հաղբատի դպրոցի մի գլուխ գործոց» վերաբերությամբ։ Այնտեղ հեղինակը մանրամասն ներկայացնում է բոլոր նկարներն ու հիշատակարանները և վերլուծության ենթարկում նշանավոր Ավետարանի մանրանկարչությունը։ Նա պատահական երևույթ չի համարում այդ ավետարանի ստեղծումը։

Հաղբատի դպրոցի և գրչության ծաղկման կարևոր վկայությունն է ստորև բերվող հիշատակարանը. «Ի թուականութեան Հայոց ՈԿԷ (1218) և ի հայրապետութեան սուրբ ոխտիս Հաղբատայ տեան Յովհաննիսի հեգի և առաքինոյ... ես նուստ Ստեփանոս, հանդերձ եղբարս իմոյ Սարգսին, յետին աշակերտք հոգեւոր վարդապետին Իգնատիոսի..., սնեալ և վարժեալ առ ոոս սրբոյ Նշանիս Հաղբատայ։ Արդ ցանկացող եղեալ իմ այս Տառնամակացս լցեալ հոգևոր գանձիւք և յերկնային մանանային, զոր շարայարեալ սրբոց վարդապետաց»³⁵։ 1243 թ.

Հաղբատի սպասավոր Գետրոս քահանան Հովհաննես գրչին «ստ ի յուսումն մակացութեաց» ընդօրինակել է սաղիս Դավիթ փիլիսոփայի Սահմանաց գիրքը, և ինքն էլ կազմում ու նվիրում է ս. Նշանին³⁶։ Հաղբատի առաջնորդներ Հովհաննես և Համազասպ եպիսկոպոսների ու Սանահինի փակակալ Գրիգորի անվան հետ է կապված Վարդան Արևելցու Սաղմոսի և Հնգամատյանի 1261 թվականին կատարած մեկնությունները։

Վարդան Արևելցու ներկայությունը Հաղբատը դարձնում է ժամանակի ամենաաչքի ընկնող ուսումնագիտական և գրչական կենտրոնը։ Օգտագործելով Հաղբատի Մատենադարանի հարստությունը նա բազմաթիվ մեկնություններ է կատարում։ Բացի վերը նշվածից, 1265 թ. Կիրակոս Գանձակեցու պատվերով Վարդանը մեկնում է Երգերգոցը. «Ի թուիս 2ԺԴ (1265) եղև մեկնութիւն երգ երգոցս ի Վարդանայ ի գիտնականի տիեզերալոյս և յիմաստուն վարդապետէ յաստուածամերձ սուրբ ոխտս Հաղբատա, ընդ հովանեա Սուրբ Նշանիս»...³⁷։ Վարդանի վկայությամբ ինքը օգտվել է Երգերգոցի Գրիգոր Նյուսացու մեկնությունից։ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Գրիգոր Նյուսացու Երգերգոցի հնագույն օրինակը գրված 973 թվականին Տարոնի գավառում։ Ձեռագրի 236 էջի լուսանցքում հին բոլորգորով գրված է. «Հաղբատա է գիրքս»։ Սնկասկած այս գրքից է օգտվել Վարդանը³⁸։

1267 թվականից Հովսեփ, Տիրացու և Գրիգոր գրիչների ընդօրինակությամբ մեզ է հասել մի Տօնապատճառ³⁹, 1281 թվականից Բարսեղ և Հովհաննես գրիչներից՝ մի ժողովածու⁴⁰, և 1298 թ. Հաղբատի միաբան Գրիգոր աբեղայից՝ մի Աստվածաշունչ⁴¹։

Լևոն Գ.-ն՝ 1285 թվականին փառաբանելով «զվանաւրեայս և զեկեղեցիս և զքարեձե կրանաւորս և զկարգս Արեւելեան կողմանցն, որ ի մեծ Հայք», Ներսէս Լամբրոնացու Սաղմոսաց մեկնությունը նվիրում է «քան զբազում տեղիս» մեծ և զհոչակաւոր երկնահաւասար սուրբ ոխտն զմայրավանքն զՀաղբատ»։ «...այն նվիրում է Հաղբատի

³⁶ Մատենադարան, ձեռ. № 4834, էջ 51բ։

³⁷ Երկու տարի հետո, 1978 թ. լրանում է այս մագաղայա հիանալի մատյանի գրության՝ հազարամյակը։

³⁸ Մատենադարան, ձեռ. № 4139։

³⁹ Մատենադարան, ձեռ. № 1324։

⁴⁰ Մեարոպ արք. Տեր-Մովսիսյան, Ցուցակ, Աստուածաշունչք, Մատենադարան, անտիպ ձեռագրացուցակներ։

⁴¹ Մատենադարան, ձեռ. № 6558, էջ 636ա։

³² Մատենադարան, ձեռ. № 194, էջ 158բ։

³³ Մատենադարան, ձեռ. № 6288։ Ձեռագիրը հայտնի է «Գետաշենի ավետարան» անունով երկար ժամանակ Գանձակի մոտ Գետաշենի եկեղեցում գտնվելու պատճառով, էջմիածին է բերել Գ. Հովսեփյանը։

³⁴ «Բազմավեպ», 1887, էջ 107—108։

³⁵ Մատենադարան, ձեռ. № 1747։

ուխտին «ի վայելումն մանկանց նորա», ...որ ամենայն աշխարհին և վանորէիցն Արեւելից, արինակ գաղափարի և պատմութեան տարածման ի բոլորսն»⁴²: Թագաւորը ձեռնադրեց պարզապէս նվեր դիտելուց բացի, ուրիշ որ արաւոր Արեւելեան Հայաստանում, և գաղափար դառնա հետագա ընդօրինակութեան նորապէս Հայքատի ընտիր օրինակ:

Հովհաննէս Ղրիմեցին՝ խոսելով Հայքատի նշանաւոր վարդապետների մասին, գրում է. «...Հովհաննէս Երզնկացի եղև վերջինն ի կրօնատու Հայքատայ, որը ծաղկեցան և ջահաւորեալ փառեցան յեկեղեցին հայոց հոշակատու և մեծիմաստ գիտութեամբ և վարութ քաղաքավարութեան և ոչ ևս ետես Հայքատ...»⁴³: Հաջորդ դարը, իսկապէս Հայքատի, ինչպէս և Սանահին համար անհայտության դար է: Իշխանական տների թուլացման ու վերացման հետևանքով Հայքատում ու Սանահինը կորցնում են իրենց հովանավորներին: Մոնղոլները ԺԳ դարի վերջին ընդունելով իսլամը ծանրացնում են հարկային լուծն ու կրօնական հալածանքները Հայաստանում: Սրան ավելանում է հաճախակի պատերազմները և բնակչության որոշ մասը գաղթում է գավառից գավառ և ապա Հայաստանից դուրս: Լեւոն Թեմուրի աշխարհավեր արշավանքները ավելի են ծանրացնում երկրի վիճակը:

15-րդ դարի կեսերին դարձյալ կյանքը աշխուժանում է Հայքատում: 1437 թվականին Մարտիրոս արեղան «ի վարժապետութեան մեծ րարունդս և քաջ հոնտորիս Զովանէս վարդապետիս», ընդօրինակում է մի Ծարակնոց⁴⁴: Մի տարի անց, այստեղ ապաստանած Աստվածատուր երեցը Հովհաննէս քահանային գրել է տալիս մի ճաշոց: Հիշատակարանում Ծառնուխի արշավանքների սուկայի նկարագրությունն է տրված, որը «բազում և անասելի անէր ած ի վերայ աշխարհիս Հայոց: Ջի գոր սրով կոտորեաց,

և գոր անողորմ գերի վարեաց և կոյուս և տվանաւ եղան, և գոր մահն տարաւ և գոր գայլք և գազանք կերան և պատուեցին և մնացեալք այսր և անոր փախեան բնաջինջ և մտին աշխարհն Վրաց:

Եւ ամենեկին անմարդաբնակ մնաց և աներեցաւ աշխարհն մեր, և դրունք երկնաման տաճարաց փակեցան, և լոյսք և կանթեղք շիջան և խաւարեցան, և խունկք և նուէրք պակասեցան, և աղօթք և երգ սաղմոսաց պակասեցան և դադարեցան, և մատուցումք պատարագաց և ամենայն սրբութիւնք եկեղեցոյ՝ խաչ և անետարան, և ամենայն հանդերձելէն, սպասք եկեղեցոյ ի ձեռն այլազգեաց գերի մատնեցան»⁴⁵: Վրաստանում ապաստանած հայության վիճակն է նկարագրված Հայքատում 1441 թ. ընդօրինակված մի ձեռագրում. «Յորժամ եկն ազգն Տաճկաց՝ փախստական եղևն ազգն Վրաց և մտան ի յԱփխազս, և մնաց ազգս Հայոց, որք եկեալ էին և բնակեալ ի Վրացտունս ի ձեռն անարինաց, և իբրև գկատաղի գազան յարձակեցան ի վերայ Հայոց, և սուր եղեալ ի վերս և սպանին իբրև հազարաց հնգից անողորմ, և անելի քան զվաթումն կրանաւոր և քահանայ սրով և քարի քարկոծեցին և սպանին և բազում եկեղեցիք ի հիմանց տապալեցին և բազում մանկունս ի մարցն խլելին և ընդ քարի հարկանէին, և մայրն գայն տեսանէր. և զբազում մանկունս անմեղս մերկացուցանէին և սրով խոցոտէին, և տղայն ճէր և աղաղակէր, և լայր, և անարեւնքն ծիծաղէին... և մայրն գայն տեսանէր և աղեխարշեալ մորմոքէր և լայր, և ոչ ոք էր որ ազներ: Բազում կանայք զողայն ի գիրկն առնէին և քար ի վայր անկանէին»⁴⁶: Այսպիսի իրադրության մեջ ազգային մշակույթը պահպանել, ձեռագրեր գրել, փրկել, բազմացնել հերոսություն էր, որ անում էին մեր գրիչներն ու ծաղկողները, ստացողներն ու փրկողները:

Մատենադարանի № 6683 ձեռագիրը գրված է Հայքատում 1455 թ. գրիչ Գրիգորը ուրիշ տեղից է եկել և ապաստանել այնտեղ. «Եւ ես անարժանս և տառապեալ ծերունին Գրիգոր երերուն և տատանեալ շըրջէի... և այժմ հանդիպեցաք այս հրաշակերտ սուրբ ուխտիս Հայքատայ և տէր Աստուածատուր եպիսկոպոսս սիրով ընկալաւ զմեզ»⁴⁷:

Ավետարանը ծաղկել է գրիչը և ավետարանիչների նկարների խորքում պատկերել է Հայքատի վանքերի գմբեթներն ու կա-

⁴² Զովհաննէս Ղրիմեցոյ պատմութիւն հոշակատու վանից Հայքատայ ա. Նշանին, Վիեննա, 1985, էջ 89—90:

⁴³ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ դ., Ա, էջ 475: Ձեռագիրը այժմ գտնվում է Բրիտանական թանգարանում, որտեղ այն նկարագրել են Ղ. Փիր-դալմեյսը (Նոտարք 52) և Ֆ. Կոնիքիը (Յուցակ 47): Առաջինը դնում է 1417, իսկ երկրորդը՝ 1437 թվականի տակ: Երկրորդը ճիշտ է թվում, որովհետև պատեր հիշված Ջաքարե առաջնորդին հանդիպում ենք հետագայում, իսկ 1423 թ. Հայքատի առաջնորդն էր Հակոբը (Հիշատակարաններ, ԺԵ դ., Ա, էջ 312):

⁴⁴ Անդ:

⁴⁵ Մատենադարան, ձեռ. № 6683, էջ 248ր:

⁴⁶ Մատենադարան, ձեռ. № 6260:

⁴⁷ Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 162:

մարները: Հովհաննես գրիչը 1458 թ. ավարտում է մի ճաշոց⁴⁸: Հիշում է Հաղբատի շուրջ բառն միաբանների, նաև տեր Հովհաննես վարպետին, «որ զարհմակն շնորհեաց»: Սա հավանաբար Սանահնեցին է: Նրա աշակերտներից Տիրատուր գրիչը Հաղբատի միաբան էր⁴⁹: 1488 թ. Վարդան արքայան գրում է մի Ավետարան, իսկ Վաղթանկը՝ կազմում է: Ձեռագիրը գտնվում է Մայր Աթոռի գրադարանում⁵⁰: 1494 թ. Հաղբատում մի Մաշտոց⁵¹ է ընդօրինակվում: Գրիչը անունը չի հայտնում, հավանաբար այն Մկրտիչ գրիչն է, որ 1499 թ. օրինակում է մի Ավետարան⁵²: Այդ թվականից Փիլիպոս եպիսկոպոսը մի Մաշտոց է ընդօրինակում⁵³: Այդ ժամանակ Հաղբատում գրչության ուսուցիչներ էին Իգնատիոսը (հետագայում արքեպիսկոպոս) և Կարապետը:

Հաջորդ դարում և այնուհետև գնալով նվազում են Հաղբատի գրիչները և գրչական կյանքը: 16—17-րդ դարերում Հաղբատի համար ընդօրինակություններ էին կատարում հարևան վանքերի ու գյուղերի գրիչները: Բայց շարունակում են պահպանել Մատենադարանն ու հարստացնել այն նվիրատվություններով: «Հաղբատ ունեցած է յոթը պահեստի տեղ: Երկու վերնախորան բուն տաճարում, չորս խորան զանգակատան վերնահարկում և մի մեծ պահեստ Ջրաղացի ձորի քարայրում», ուր պահվում էին վանքի սրբությունների հետ նաև ձեռագրերը:

1826 թ. Հովհաննես Ղրիմեցին Հաղբատում «ի հարազատ բնագրե՝ հեղինակին» ընդօրինակում է Պետրոս Բերդումյանի «Բարոզգիրքը»⁵⁴:

1840 թ. ընդօրինակվում է Արիստակես Լաստիվերցու Պատմությունը հին, 1214 թ. օրինակից. «Գաղափարեաց ի հին ձեռագրե, գրեցելոյ ի թվին Հայոց ՈԿԳ. (1214) զայս պատմութիւն, ի վայելս անձին իւրոյ Յովհաննէս Յարութիւնեան Երզնկեանց: Հին ձեռագիրն գտաւ յայրին Զառնէրի, պահարանի կայից վանացն, ի 1827 ամի ի Հաղբատ»⁵⁵:

1827 թ. Հովհաննես եպիսկոպոս Ղրիմեցին Հաղբատում գրում է «Պատմութիւն վանիցն Հաղպատայ, Սանահնի և Արձանագրութիւն այլոց վանօրէից»⁵⁶, որն հրատարակվեց վերջերս:

Հաղբատի ընտիր օրինակներից ոչ միայն ընդօրինակում, այլև տպագրում էին: Մատենադարանի № 4473 ձեռագրում կարդում ենք. «Ջայս Խորհրդատեւոր ետ բերել Տ. Տ. Գէորգ Դ կաթողիկոս Ամենայն Հայոց ի ա. Նշանի վանից Հաղբատայ սո ի համեմատել ընդ այնպիսեաց, վասն ի նորոյ տպագրել տալոյ զայսպիսին: Ուստի և յետ տպագրութեան նորոյն յայսմիկ 1880 ամի հրամանաւ նորին օծութեան եղաւ այս ի գրադարանի ա. Էջմիածնի»⁵⁷:

Երեսնական թվերին Հաղբատի ձեռագրերը տեղափոխվում են Երևան:

Սանահնի և Հաղբատի գրչության կենտրոններից մեզ հասած այս ժառանգությունը ցույց է տալիս հայ մշակույթի զարգացման, մշակութային արժեքների ստեղծման, պահպանման ու տարածման գործում նրանց կատարած հսկայական ծառայությունը:

⁴⁸ «Էջմիածին», 1950, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 84:

⁴⁹ Մատենադարան, ձեռ. № 8357:

⁵⁰ Մատենադարան, ձեռ. № 6822:

⁵¹ Մատենադարան, ձեռ. № 1084:

⁵² Բազմավեպ, 1956, էջ 107—108:

⁵³ Մատենադարան, ձեռ. № 3747: Առաջին էջում վերջինիս նկարն է հասակով մեկ կանգնած, կատարված սև ջրաներկով: Այդ թուղթը ուրիշ գույն ունի, հավանաբար նկարված է ուրիշի ձեռքով: Ձեռագիրը արտագրվել է Էջմիածնի համար:

⁵⁴ Մատենադարան, ձեռ. № 6457:

⁵⁵ Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ Նոր Զուղայի, № 531 (անտիպ): Այնուհետ է նույն հեղինակի մի ժողովածուն (№ 532), որը պարունակում է զանազան պատմական նյութեր, սկսած Եփրեմ կաթողիկոսի ժամանակներից (որոնք վերաբերում են հատկապես Էջմիածնին և Կովկասին) և դեպի Հնդկաստան իր կատարած ճանապարհորդության նկարագրությունը: Ձեռագիրը գրված է տարբեր ժամանակներում և վայրերում, նաև Հաղբատում:

⁵⁶ Մատենադարան, ձեռ. № 4473, էջ 4բ:

⁵⁷ Անդ:

